«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի N 1042-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ _____ 2018 թվականի N ___Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-ի N 1042-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Հայաստանի Հանբրապետության կառավարությունը որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու և փաստացի ցանված աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարա-ծությունների համար պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1042-Ն որոշման (այսուհետ՝ որոշում)՝

1) 4-րդ կետում «վրա» բառից հետո լրացնել «իսկ հողօգտագործողի կողմից տվյալ հողատարածքի փաստացի օգտագործման դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի հիման վրա» բառերը,

2) որոշման 7-րդ կետով հաստատված N 3 հավելվածի 2-րդ կետում նշված ձևի տեղեկանքի «Սեփականության կամ վարձակալության իրավունքի վկայականի համարը» սյունյակում «համարը» բառից հետո լրացնել «, կամ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքը» բառերը,

3) որոշման N3 հավելվածի 5-րդ կետում «10» թիվը փոխարինել «3» թվով,

4) որոշման N3 հավելվածի 5-րդ կետում «նոյեմբերի 25-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 5-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: